# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.09.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**

**թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/93**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 09.08.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ն 09.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) զբաղվում է համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և վաճառքով: Ընկերությունը ցանկանում է մասնակցել ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված 1-ին չափաբաժնի համար ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին, սակայն Պատվիրատուի կողմից առաջադրված պայմանները ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու արդյունքում, առանց այդ պայմանները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու Ընկերությունը զրկվում է մասնակցության հնարավորությունից:

ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված 1-ին չափաբաժնի համար տեխնիկական բնութագրով սահմանված է՝

- Պրոցեսոր -/CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի/, «power supply» - 400-450W, «իրական», RAM-4GB, 2x2GB DDR3, Ցանցային քարտ – 10/100/1000 մբթ., կոշտ սկավառակ/HDD/- 1TB Sata 3 7200 rpm, Case-Ստանդարտ: Մոնիտոր – 19, Ստեղնաշար/Keyboard/- USB տեսակի ինտերֆեյսով, Մկնիկ/Mouse/- լազերային մկնիկ USB ինտերֆեյսով և անիվով, Անխափան սնուցման սարք/UPS/- 1200 E-pro: Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի: Սպասարկման ընթացքում անսարքությունները պետք է վերացվեն 48 ժամվա ընթացքում: Սպասարկումը արտադրողի կողմից հավատարմագրված սերվիս կենտրոնում:»

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ

նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Համեմատություն անցկացնելով հոդվածի բովանդակությամբ առաջադրված պայմանների և 1-ին չափաբաժնում նշված «Տեխնիկական բնութագիր»-ը մասում նշված տվյալների հետ, ակնհայտ է դառնում, որ Պատվիրատուն չի պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջները:

Ավելին, ինչ վերաբերվում է «Տեխնիկական բնութագիր»-ը մասում նշված «Սպասարկման ընթացքում անսարքությունները պետք է վերացվեն 48 ժամվա ընթացքում:» պայմանին, ապա այդ մասով անհրաժեշտ է արձանագրել, որ սպասարկման ընթացքում անսարքությունները 48 ժամվա ընթացքում վերացվելու պայմանը խախտում է հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովումը, քանի որ Պատվիրատուն հաշվի չի առել ոչ աշխատանքային օրերի առկայությունը, ավելին հանրահայտ և ապացուցման կարիք չունի այն հանգամանքը, որ աշխատանքային օրերին հաջորդում են ոչ աշխատանքային օրերը, իսկ երբեմն էլ ոչ աշխատանքային օր հանդիսացող «կիրակի» օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ Կառավարության կողմից ոչ աշխատանքային օր է հայտարարվում, ինչպես նաև ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Նոր Տարուն» իրար են հաջորդում տասից ավելի տոնական օրերը, որոնց ընթացքում Պատվիրատուի կողմից առաջ քաշված սպասարկման ընթացքում անսարքությունները 48 ժամվա ընթացքում վերացվելու պայմանը մասնակցի կողմից

հասկանալի պատճառով հնարավոր է չիրականացվի և հետագայում առաջ գան անբարենպաստ հետևանքներ:

Իսկ ինչ վերաբերվում է «Տեխնիկական բնութագիր»-ը մասում նշված «Սպասարկումը արտադրողի կողմից հավատարմագրված սերվիս կենտրոնում:» պայմանին, ապա այդ պայմանը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման, քանի որ մասնակցի համար նախապայման են սահմանում և վերջինիս զրկում են որակյալ սպասարկումն իր կամ իր հետ համագործակցող սերվիս կենտրոնում իրականացման հնարավորությունից:

Վերոգրյալը հանդիսանում է նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքների խախտում և սահմանափակում:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդված՝

«Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:»

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդված՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված՝

Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 1-ին մաս՝

1. Սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 1-ին մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն»՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ»՝ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը:

«ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է. Պարտավորեցնել ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել նշված ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ հայտարարելու մասին համապատասխան որոշումը:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի հիմնադիր Ներսես Ավդալյանը և տնօրեն Հայկ Պետրոսյանը:

**2. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը 20.08.2018թ. թիվ 39062-18 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ «ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հայտնում եմ, որ անխափան սնուցման սարքի E-pro և INTEL CORE i3 4 սերնդի պրոցեսորի ապրանքանիշերից հետո «կամ համարժեք» բառերը տեխնիկական վրիպակի պատճառով չեն նշվել:

Ինչ վերաբերվում է նշված սերնդի պրոցեսորների հնացած և բարոյապես մաշված լինելուն, ապա բողոքարկող կողմի ներկայացված տեղեկությունն առ այն, որ նրանք արտադրությունից դուրս են եկել 2013-2014թթ. կարելի է դիտարկել որպես ապատեղեկատվություն: Նրանց մեծ մասը ոչ թե արտադրությունից դուրս է եկել 2013-2014թթ., այլ նոր արտադրվել են այդ ժամանակահատվածում: Ավելին՝ նրանցից որոշների արտադրման սկիզբն է նույնիսկ 2015 թվականը: Ի հավաստում վերոգրյալի ներկայացվում են հղումներ, որտեղ նշված պրոցեսորները ներառված չեն (հնացածները) բաժնում հենց արտադրողի կայքից (https://ark.intel.com/ru/#@PanelLabel122139):

Անսարքությունների դեպքում 48 ժամվա ընթացքում արտադրողի սերվիս կենտրոնի կողմից անսարքությունը վերացնելու պարտադիր պահանջը վերաբերվում է միայն ամբողջական (կոմպլեկտ) համակարգիչներին: Իսկ տարբեր ապրանքանիշերից բաղկացած հավաքածուի տարբերակում անսարքությունները պետք է վերացվեն 48 ժամվա ընթացքում հաղթող մասնակցի ցանկացած միջոցներով:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ Արմինե Նազարյանը:

**3. ԳԲԽ-ԷՍ-2018/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 09.08.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված 20.08.2018թ. թիվ 39062-18 գրությունը, ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր).

ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ համակարգչային տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Հրավերի 1 հավելվածով 1-ին չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

- Համակարգիչ ամբողջը մեկում՝ Պրոցեսոր -/CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի/,<<power supply>> - 400-450W, <իրական>, RAM-4GB, 2x2GB DDR3, Ցանցային քարտ – 10/100/1000 մբթ., կոշտ սկավառակ/HDD/- 1TB Sata 3 7200 rpm, Case-Ստանդարտ: Մոնիտոր – 19, Ստեղնաշար/Keyboard/- USB տեսակի ինտերֆեյսով, Մկնիկ/Mouse/- լազերային մկնիկ USB ինտերֆեյսով և անիվով, Անխափան սնուցման սարք/UPS/- 1200 E-pro: Երաշխիքային սպասարկում – 1 տարի: Սպասարկման ընթացքում անսարքությունները պետք է վերացվեն 48 ժամվա ընթացքում: Սպասարկումը արտադրողի կողմից հավատարմագրված սերվիս կենտրոնում:

«ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ նշված ապրանքի տեխնիկական բնութագրում այնպիսի տեխնիկական հատկանիշներ են սահմանվել, որոնք անհնարին են դարձնում մասնակցությունը տվյալ գնման գործընթացին: Տեխնիկական բնութագրով սահմանվել է պայման՝ «Սպասարկման ընթացքում անսարքությունները պետք է վերացվեն 48 ժամվա ընթացքում:», որը խախտում է հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովումը, քանի որ Պատվիրատուն հաշվի չի առել ոչ աշխատանքային օրերի առկայությունը, որոնց ընթացքում մասնակցի կողմից կատարվող աշխատանքը հասկանալի պատճառով հնարավոր է չիրականացվի: Ընկերությունը հայտնել է նաև, որ գնվող ապրանքի համար այնպիսի տեխնիկական հատկանիշներ են ներկայացվել, որոնք

հանգեցնում են որոշակի կոնկրետ մոդելի և Պատվիրատուն չի ապահովել «կամ համարժեք» բառերի կիրառումը, ինչպես նաև այն, որ գնվող ապրանքը (Պրոցեսոր -/CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի) բարոյապես հին է և դուրս է արտադրությունից:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին, որպես ապացույց ներկայացրել է Intel corporation-ի կողմից էլ. փոստի միջոցով ստացված նամակի կարճապատկերումը առ այն, որ /CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի պրոցեսորը 2015թ.-ի վերջից դուրս է արտադրությունից:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստիժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ գնվող ապրանքը (Պրոցեսոր -/CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի) հնացած և արտադրությունից դուրս լինելու տեղեկությունն ապատեղեկատվություն է, քանի որ գնվող ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմվել է Intel corporation-ի պաշտոնական կայքում տեղադրված ինֆորմացիայի հիման վրա, իսկ այն ինչ վերաբերվում անսարքությունների դեպքում 48 ժամվա ընթացքում արտադրողի սերվիս կենտրոնի կողմից անսարքությունը վերացնելու պարտադիր պահանջին Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ տեխնիկական բնութագրով սահմանված 48 ժամը վերաբերում է միայն աշխատանքային օրերին, այլ ոչ թե՝ ոչ աշխատանքային օրերին: Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որը «կամ համարժեք» բառերի կիրառումի չի պահպանվել վերջիններիս կողմից տեխնիկական վրիպակի պատճառով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հեդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- Հրավերի՝ 1-ին չափաբաժնով նախատեսված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում նշվել է գնման առարկայի կոնկրետ մոդել, սակայն նշված հղումը օգտագործելիս բնութագիրը չի պարունակել «կամ համարժեք» բառերը:

- պահանջվող /CPU Intel Core i3 GHz/4-րդ սերնդի պրոցեսորը 2015թ. վերջից դուրս է եկել արտադրությունից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 5-րդ մասով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՆՈՈՒԹ. ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 09.08.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՀՏՍ-2018/ՃՈ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**